Եղիշե Չարենց

Պատգամ

Նոր լույս ծագեց աշխարհին.
Ո՞վ այդ արևը բերեց:–

Ահա ոսկյա մի արև՝
ճառագումով իր հրե՝
Այգաբացի պուրպուրե

Նժույգների վրա հեգ՝
Նոր աշխարհին ու մարդուն
Հղում է լույս զվարթուն,
Նոր աշխարհին ու մարդուն
Ո՛վ բերեց լույսն այս արթուն,
Օ՛, ո՞ւմ ձեռքով վառվեց, ո՞ւմ,
Հրակարմիր, հրավարս,
Ադամանդյա լույսը այս:-

Կքած կյանքի բեռի տակ,
Խոր գերության ընդերքում,

Իմաստության մի գետակ
Հիմարության համերգում–
Քանի՛ տարի, քանի՛ դար
Վկայեցիր անհերքում…

Ափերին այն խավարտչին,
ՈՒր հայրենիքն էր մեր հին,–
Չկա՞ր արդյոք գետ մի հորդ,
Որ գերության անհաղորդ՝
Լուրթ՝ հոսելով դարից-դար՝
Մթության մեջ այն համառ
Այս այգաբացն էր կրում,
Հո՛ւր այգաբացն այս հեռու՝
Հնուց պահած իր ջրում
Օ՛, ըղձակա՛ն այս հեռուն…